ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԳԵՈՐԳ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ ԵՒ ԴՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմական բոլոր ժամանակներում կրոնը կարեւոր գործոն է եղել հասարակական կյանքում եւ վճռական ազդեցություն թողել հասարակության աշխարհայացքային պատկերացումների, հոգեւոր-մշակութային, կրթական, գիտական, սոցիալական եւ այլ ոլորտների գործունեության վրա: Պետականության պայմաններում հասարակության իրավաքաղաքական հարաբերությունների անբաժան մասն է նաեւ կրոնը՝ իր բազմազան ու տարատեսակ դրսեւորումներով, եւ յուրաքանչյուր ժողովրդի ու պետության ընդհանուր նկարագիրը ստանալու, պատմականորեն ձեւավորված գործընթացները ընկալելու եւ բացահայտելու համար կարեւոր է ուսումնասիրել նաեւ տվյալ հասարակական միջավայրին բնորոշ կրոնական պատկերացումները, ընկալումներն ու դրանց դրսեւորման ձեւերը: Այս առումով բացառություն չէ նաեւ Հայաստանը, եւ ժամանակակից ուսումնասիրությունների շարքում պետք է կարեւորել նաեւ ՀՀ կրոնական իրավիճակի վերաբերյալ օբյեկտիվ, անկողմնակալ եւ բազմակողմանի ուսումնասիրությունները, որոնք հնարավորություն կտան առավել լիարժեք եւ ամբողջական պատկերացում կազմել Հայաստանում կրոնական կյանքի եւ նրա տարատեսակ դրսեւորումների մասին: Ներկայացվող ուսումնասիրությունը նպատակ ունի վերհանել ՀՀ կրոնական իրավիճակին առնչվող որոշ հարցեր եւ հատկապես երիտասարդության շրջանում իրականացված հետազոտության վերլուծության միջոցով տալ դրանցից մի քանիսի ընկալումները: Անշուշտ, ներկայացվող տեսակետները վերջնական չեն եւ ընդամենը փորձ են՝ ՀՀ երիտասարդության շրջանում առկա կրոնական պատկերացումների եւ կրոնի նկատմամբ վերաբերմունքի միջոցով ստանալ նաեւ ՀՀ կրոնական իրավիճակի ընդհանուր նկարագիրը:

Տեղեկության սակավության, միակողմանի տեսակետների առկայության եւ լիարժեք ուսումնասիրությունների բացակայությանը որոշ չափով լրացնելուն է միտված երիտասարդության շրջանում «Երիտասարդություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Հոգեւոր կյանքի առանձնահատկությունները Երեւանում» սոցիոլոգիական հետազոտությունը[1]: Հասարակության տարբեր շերտերից հետազոտության թիրախ է ընտրվել երիտասարդությունը, քանի որ այն հասարակության առավել ակտիվ զանգվածն է եւ արտահայտում է նաեւ ուսումնասիրվող ոլորտի ապագա զարգացումները:

Հետազոտության շրջանակներում ներառված էին բազմաբնույթ հարցեր, որոնց նպատակն էր ստանալ հնարավորինս ամբողջական պատկեր երիտասարդության շրջանում կրոնական կյանքի եւ կրոնական կազմակերպությունների գործունեության մասին:

Հիմնական հարցերից մեկը վերաբերում էր Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների գործունեությանը եւ բացահայտում էր, թե որքանով են երիտասարդները տեղյակ կրոնական կազմակերպությունների մասին (տե՛ս գծապատկեր 1): Ստացված պատկերը հետաքրքրական է եւ ցույց է տալիս, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 97,1%-ը տեղյակ է որեւէ կրոնական կազմակերպության մասին, իսկ 2,9%-ի պատասխանը բավականին հետաքրքրական է, որովհետեւ ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, կան երիտասարդներ, որոնք տեղյակ չեն կամ չեն հետաքրքրվում, կրոնական կազմակերպությունների գործունեությամբ: Սակայն կարող ենք փաստել, որ կրոնական կազմակերպությունների գործունեությանն այս կամ այն կերպ ծանոթ են գրեթե բոլորը, եւ կրոնը հասարակական կյանքում ունի մեծ դերակատարություն:

Մեկ այլ հարցադրմամբ փորձել ենք պարզել, թե որն է կրոնական կազմակերպությունների մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը:

Արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածները կրոնական կազմակերպությունների մասին տեղեկանում են ամենատարբեր ձեւերով.

ա. 39,1%-ը տեղեկացել է ՁԼՄ-ներից:

բ. 31,6%-ը, որը նույնպես մեծ ցուցանիշ է, տեղեկատվության աղբյուր է նշել ընկերներին, ինչը ցույց է տալիս, թե որքանով են սոցիալական կապերը մեծ դերակատարություն ունենում կրոնական կազմակերպության գործունեության հարցում:

գ. բավականին մեծ տոկոս է կազմում քարոզիչների հետ հանդիպման միջոցով տեղեկացվածների թիվը՝ 11,0%: Այս արդյունքն ակնհայտորեն ցույց է տալիս որոշ կրոնական կազմակերպությունների ակտիվ քարոզչական գոր-

1 Այսուհետ՝ Հետազոտություն:

ծունեությունը հատկապես հասարակական վայրերում, ինչպես նաեւ բնակարաններ այցելությունների տեսքով, որն օրենսդրությամբ ամբողջովին կարգավորված չէ եւ երբեմն առաջ է բերում կրոնական մեծամասնության անթաքույց դժգոհությունը:

դ. Ստացված պատասխաններից հաջորդը՝ 6,2%-ը, տեղեկատվության աղբյուր է նշել ընտանիքը, ինչը պատահական չէ, որովհետեւ դարեր շարունակ այն եղել է հայ իրականության մեջ մարդու ձեւավորման եւ դաստիարակության կարեւորագույն ինստիտուտը:

ե. Բավականին հետաքրքրական է հարցվածների 4,7%-ի պատասխանը՝ անձնական ուսումնասիրություններ, որը բացահայտում է կրոնի նկատմամբ հետաքրքրվածության աճը ՀՀ անկախության վերականգնումից հետո, երբ հասանելի դարձան խորհրդային շրջանում կրոնի սահմանափակման հետեւանքով անհասանելի շատ արժեքներ:

Բուհերում անցկացված մեր հարցումների երրորդ հարցը վերաբերում էր մասնակիցների՝ կրոնական կազմակերպությունների մասին տեղեկացվածությանը: «Ինչ կրոնական կազմակերպություններ գիտեք» հարցին հարցվածների 90,4%-ը պատասխանել է «Եհովայի վկաներ»[2]: Այնուհետեւ 21,1%-ը լսել է կամ տեղյակ է «Կյանքի խոսքի», 21,0%-ը՝ ավետարանականների, 13,4%-ը՝ հիսուսականների եւ 6,1%-ը՝ սատանիստների մասին: Այս կազմակերպութիւններից զատ՝ ստացվել են նաեւ 2 տասնյակից ավելի այլ կազմակերպությունների վերաբերող պատասխաններ, որոնք քիչ տոկոս են կազմում եւ չեն ներառվել գծապատկերի մեջ:

Փաստացի ՀՀ տարածքում իրենց գործունեությունն են ծավալում բազմազան եւ տարաբնույթ կրոնական կազմակերպություններ, որոնց մասին կարծիքները հասարակության մեջ միանշանակ չեն: Առաջին հերթին պետք է նշենք այն կարեւոր հանգամանքը, որ դրանց գործունեությանն առնչվող օբյեկտիվ եւ անաչառ տեղեկատվությունը թերի է կամ ուղղակի բացակայում է: Միաժամանակ, այս կրոնական կազմակերպությունների գործունեությունն այնքան էլ թափանցիկ չէ՝ կապված վերջիններիս փակ ներհամայնական կյանքի հետ: Ուստի «ո՞րքանով են տեղյակ այդ կազմակերպությունների մասին» հարցի արդյունքում ստացել ենք հետեւյալ պատկերը (գծապատկեր 4):

Հետազոտության հաջորդ հարցը վերաբերում էր հասարակական տարբեր շերտերի մեջ հակասական վերաբերմունք առաջացնող «աղանդ» հաս-

2 Հարկ ենք համարում նշել, որ հարցումների ժամանակ մի հետաքրքրական իրողություն եւս բացահայտվեց. հարցվածների մեծամասնությունը Հայ առաքելական եկեղեցին չի դիտարկում որպես առանձին կրոնական կազմակերպության (այն համարում է իր ինքնության մասը), եւ «կրոնական կազմակերպություն» ասելով, հասկանում է համեմատաբար վերջերս հայ իրականություն ներթափանցած կրոնական կազմակերպություններին: Թերեւս սա է պատճառը, որ հարցվածների ճնշող մեծամասնությունն առաջին հերթին նշել է ՀՀ-ում ակտիվ գործունեությամբ հայտնի «Եհովայի վկաներին»:

կացությանը[3]: Պետք է նշենք, որ այս հասկացության ընկալումը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել, եւ այսօր էլ «աղանդ» եզրույթն իր ընկալումն ու առանձնահատկությունն ունի: Այն հարցին, թե «ինչպես կբնութագրեք «աղանդ» հասկացությունը եւ շարունակեք, խնդրեմ, միտքը՝ աղանդը..., մենք ստանում ենք հետեւյալ պատասխանները.

ա. Եկեղեցուն[4] դեմ կրոնական ուղղվածություն՝ 47,3%:

բ. Հավատք, որը կարդում է Աստվածաշունչն իր մեկնաբանությամբ՝ 12,7%:

գ. Մարդկանց խումբ՝ կազմակերպություն՝ 1,9%:

դ. Անգիտակից հոտ, որն օգնության կարիք ունի՝ 2,4%:

ե. Գումար վաստակելու միջոց, բիզնես՝ 2,7%:

զ. Ուղեղների լվացում՝ 6,1%:

է. Մարդու հոգեւոր արժեքներից շեղման հատուկ ծրագիր՝ 1,9%:

ը. Չարիք է՝ 5,7%:

թ. Պետությանը վտանգող համակարգ է՝ 7,2%:

ժ. Ընդունելի երեւույթ՝ յուրաքանչյուր մարդու ընտրությունն է՝ 1,5%:

ժա. Դժվարանում է պատասխանել՝ 13,5% (գծապատկեր 5):

Ներկայացված պատասխանները պայմանականորեն կարող ենք բաժանել 3 մասի.

ա. Ճնշող մեծամասնությունը բացասաբար է ընկալում կամ ուղղակի համարում է ավանդական հավատից եւ եկեղեցուց շեղում: Աղանդը վտանգավոր են համարում ընդհանուր պետության եւ անհատի տեսանկյունից: Հետաքրքրական է, որ աղանդը նաեւ ընկալվում է որպես բիզնես, գումար վաստակելու միջոց՝ մարդկանց կրոնական զգացմունքների հաշվին գումար աշխատելու դրսեւորում:

բ. Հարցվածների միայն քիչ տոկոսն է այն համարում ընդունելի երեւույթ:

գ. Բավականին մեծ տոկոս է կազմում «դժվարանում եմ» պատասխանողների թիվը, որը առանձին ուսումնասիրության կարիք ունի եւ դուրս է մեր հետազոտության շրջանակից:

Այսպիսով, նշված պատասխաններում կարող ենք առանձնացնել մի քանի հիմնահարցեր, որոնք կարեւորություն են ձեռք բերում եւ պահանջում են բազմակողմանի ուսումնասիրություն ու ամենատարբեր լուծումներ: Մասնավորապես կարելի է առանձնացնել կրոնական կազմակերպությունների գործունեության մեջ առկա սոցիալական, ֆինանսական, կազմակերպչական, կրթական եւ այլ տիպի հիմնահարցերի առանձնահատկությունները, կիրառվող հոգեբանական մեթոդները, հասարակական եւ քաղաքական գործընթացներում ներգրավվածության խնդիրները եւ այլն:

3 Տե՛ս Քրիստոնյա Հայաստան, Երեւան, 2002, էջ 32-34:

4 Եկեղեցի ասելով՝ ընկալվում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Որքա՞ն եք տեղյակ այդ կազմակերպությունների մասին:



Գծապատկեր 4

Ինչպե՞ս կբնութագրեք «աղանդ» հասկացությունը: Շարունակեք, խնդրեմ, միտքը՝ աղանդը...



Գծապատկեր 5

Ինչպե՞ս եք վերաբերվում կրոնական կազմակերպությունների ակտիվ քարոզչությանը:



Գծապատկեր 6

Տեղյա՞կ եք, որ Հայաստանում կան կրոնական կազմակերպություններ:



Գծապատկեր 1

Ինչպե՞ս եք տեղեկացել այդ կազմակերպությունների մասին:



Գծապատկեր 2

Ի՞նչ կրոնական կազմակերպություններ գիտեք: Թվարկեք, խնդրեմ, նրանց անունները:



Գծապատկեր 3

Նախորդ գծապատկերում մենք անդրադարձանք այն հարցին, թե հարցվածներն ինչ են հասկանում «աղանդ» ասելով եւ, որպես տրամաբանական շարունակություն, տրվեց նաեւ այն հարցը, թե ինչպես են վերաբերվում կրոնական կազմակերպությունների ակտիվ քարոզչությանը.

ա. Պետք է արգելել դրանց գործունեությունն օրենքի շրջանակում՝ 47,3%:

բ. Հայ առաքելական եկեղեցին պետք է պայքարի դրանց դեմ՝ 18,6%:

գ. Յուրաքանչյուր մարդու ընտրությունն է՝ 13,4%:

դ. Ձեզ համար միեւնույն է, անտարբեր եք՝ 7,1%:

ե. Պետք է լինեն, բայց նրանց գործունեությունը պետք է վերահսկվի Հայ առաքելական եկեղեցու կողմից[5]՝ 4,7%:

զ. Պետք է լինեն, բայց նրանց գործունեությունը պետք է վերահսկվի պետության կողմից՝ 2,8% (գծապատկեր 6):

Գծապատկերից հստակ երեւում է, որ հարցվածների մեծ մասն այս հարցի լուծումը տեսնում է օրենքի շրջանակներում, եւ առկա է օրենսդրական բարեփոխումների հասարակական պահանջ: Հատկանշական է, որ հարցվածների մեծ տոկոսը կարծում է, թե Հայ Առաքելական Եկեղեցին պետք է պայքարի դրանց դեմ կամ վերահսկի դրանց գործունեությունը: Իհարկե, այս պատասխանն սպասելի է, եթե հաշվի ենք առնում այն կարեւոր հանգամանքը, որ ՀՀ-ն մոնոէթնիկ պետություն է եւ հասարակության 93,2%-ը իրեն համարում է Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ: Հարցվածների 13,4%-ը կարծում է, որ աղանդի ընտրությունը յուրաքանչյուր մարդու իրավունքն է, եւ դրանք վտանգ չեն ներկայացնում: Բավականին հետաքրքրական է, եւ թերեւս առանձին ուսումնասիրության առարկա, հարցվածների այն խումբը, որի համար այդ ամենը միեւնույնն է, կամ ուղղակի այդ ամենի հանդեպ անտարբեր է:

Այսպիսով, ամփոփելով հետազոտության մի քանի արդյունքները, ակնհայտ է դառնում, որ ՀՀ կրոնական իրավիճակի օբյեկտիվ եւ համակողմանի ուսումնասիրություններն այսօրվա հրամայականն են եւ ունեն հասարակական մեծ հնչեղություն: Առաջին հերթին խիստ կարեւոր է օրենսդրական բարեփոխումների անցկացումը, երկրի հիմնական օրենքի՝ Սահմանադրության ոգուն համահունչ, որտեղ կապահովվեն ինչպես կրոնական փոքրամասնության, այնպես էլ մեծամասնության իրավունքները:

5 Նշված պատասխանը հարցվածների անձնական տեսակետն է եւ կարող ընկալվել որպես օբյեկտիվ իրականության արտացոլում, քանի որ Հայ առաքելական եկեղեցին ակնհայտորեն չունի այդպիսի գործառույթներ, առավել եւս՝ լծակներ:

РЕЗЮМЕ

Статья посвящена религиозной ситуации в Республике Армения в сфере исследований и анализа опроса, проведенного среди молодежи. Ссылка делается на религиозных организаций и общественных отношений к их деятельности.

Исследование включает в различных вопросов, которые относятся к следующим пунктам:

а. насколько молодежь знает о религиозных организаций,

б. что является основным источником информации о религиозных организаций,

в. какие религиозные организации знайте,

г. что такая "секта",

д. как они относятся к активной кампании религиозных организации.

Подводя итоги опроса, видно, что объективные и всеобъемлющие исследования религиозной ситуации в Республике Армения стали насущной необходимостью и имеют большое общественное значение

SUMMARY

The article focuses on the religious situation in the Republic of Armenia, the youth-related research and analysis of the survey. Reference is made to the religious organizations and public attitudes regarding the activities of them in the Republic of Armenia.

The study includes various issues, e.g.:

a. to what extent young people are aware of the religious organizations,

b. what the main source of information is about religious organizations,

c. what religious organizations are,

d. what they mean by saying "sect",

e. how they treat to the active campaign of the religious organizations.

Summarizing the results of the survey, it is evident that the objective and thorough studies of the religious situation in the Republic of Armenia today became urgent and have a great public significance.